ՆԱԽԱԳԻԾ
ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Կ-090ˈ-12.11.2021-ԱՍ-011

ՀԱՅԱՍՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1-ին, 4.2-րդ եւ 4.3-րդ կետերով.

«4.1) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը.

4.2) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները.

4.3) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերի կազմման եւ իրականացման կարգը.»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածը Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝

«2 Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2023 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ կետերի, որոնք գործում են մինչև է 2023 թվականի փետրվարի 1-ը։»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածում 1-ին մասից հանել երկրորդ նախադասությունը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյան

ՏԵՂԵԿԱՆՔ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ՀԱՅԱՍՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

«ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» 2021 թվականի մայիսի 5-ի ՀՕ-195-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 4.1-ին, 4.2-րդ եւ 4.3-րդ կետերով.

«4.1) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության իրականացման կարգը.

4.2) հաստատում է բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչները.

4.3) հաստատում է հաշմանդամություն ունեցող անձանց վերականգնողական անհատական ծրագրերի կազմման եւ իրականացման կարգը.»:

Հոդված 2. Օրենքի 13-րդ հոդվածը Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝

«2 Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2023 թվականի փետրվարի 1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ կետերի, որոնք գործում են մինչև է 2023 թվականի փետրվարի 1-ը:»:

Հոդված 3. Օրենքի 14-րդ հոդվածում 1-ին մասից հանել երկրորդ նախադասությունը:

Հոդված 4. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հանձնաժողովի նախագահ Հերիքնազ Տիգրանյան

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ

«ՀԱՇՄԱՆԴԱՄՈՒԹՅՈՒՆ ՈՒՆԵՑՈՂ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-090-12-11.2021-ԱՍ-011/1) ԵՎ «ԱՆՁԻ ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-090[1]-12.11.2021-ԱՍ -011/1) ՕՐԵՆՔՆԵՐԻ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկությունները ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
«Անձի ֆունկցիոնալության գնահատման մասին» օրենքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծ (Կ-090[1]-12.11.2021-ԱՍ-011/1)					
1.	Կառավարություն	3-րդ հոդված	Նախագծի 3-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Հոդված 13. Օրենքի 13-րդ հոդվածը լրացնել 2-րդ մասով՝ «2. Սույն օրենքի գործողությունը տարածվում է 2023 թվականի փետրվարի	**Ընդունվել է:** Կատարվել է համապատասխան լրացումը:	**Ընդունվել է**

			1-ից ծագած հարաբերությունների վրա, բացառությամբ 5-րդ հոդվածի 1-ին մասի 4.1-ին, 4.2-րդ և 4.3-րդ կետերի, որոնք գործում են մինչև է 2023 թվականի փետրվարի 1-ը:»:		
«Հաշմանդամություն ունեցող անձանց իրավունքների մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» օրենքի նախագիծ					
2.	Կառավարություն	2-րդ հոդվածի 3.1.-ին մասի 4-րդ կետ	2-րդ հոդվածի 3.1.-ին մասի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «Միասնական սոցիալական ծառայության իրավասու ստորաբաժանումը բժշկասոցիալական փորձաքննության արդյունքում անձին հաշմանդամություն ունեցող է ճանաչում սույն հոդվածին, ինչպես նաև կառավարության կողմից հաստատված **բժշկասոցիալական փորձաքննության իրականացման, վերականգնողական անհատական ծրագրերի կազմման ու իրականացման կարգին և բժշկասոցիալական փորձաքննության չափորոշիչներին** համապատասխան:»:	Ընդունվել է: Կատարվել է համապատասխան փոփոխությունը:	**Ընդունվել է:**

Հանձնաժողովի նախագահ **Հերիքնազ Տիգրանյան**